



ՀԱՄԱՐԱԲԵՐ ՌԹԻՄԵՐՈՅ լրագիրը հրատարակուած է իւրաքանչիւր ամսի 10 րն և 20 րն. տարեկան գինը ՃՈՒՆ-ՔԱՂԻ հետ 'ի միասին է 5 ռուբ. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ռուբ. արծ. կանխիկ վճարելի:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10

Հ. 5

1861 ՍՄԻ

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԺԻՔԻ ՇԱՐԺՈՒՄՆ ԳԱՂՂԻԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Մեր ժամանակի լուսաւոր տէրութիւններից ոչ մինը չէ կարող առանց վնասի հրաժարուել այն ճշմարտութիւնից, թէ «ազատութիւնը՝ բարեկարգութեան կենդանի զօրութիւններից կամ հարկաւոր պայմաններից մինն է»: Այդ ճշմարտութիւնը ունենալով մտքերումս, չեմ կարող չտատովանել, թէ Գաղղիացոց ներկայ ժամանակի կարծիքը ժողովրդական կրթութեան վերայ, որ տիրապիտել է ամենի սրտումը, շատ նշանաւոր բան է: Համարեա բոլոր Գաղղիացոց օրագիրները խօսումն անդադար հասարակական ուսումնաւորութեան վերայ և անդադար կրկնումն իւրեանց կարծիքը և նորանոր քննութիւնները ներկայ ժամանակի ազգային ուսումնարանների թերութիւնների վերայ: Գաղղիացոց բնաւորութեան զանազանութիւնը Գերմանականից հազիւ թէ որեւիցէ բանումը բացատրումէ այնպէս պայծառ և մեկին, որպէս այն որոշ որոշ հայեցումների մէջ, որ Գաղղիացիք և Գերմանացիք ունի ժողովրդական ուսումնատուութեան վերայ: Գերմանիայումը ուսումնաւորութիւնը համարուումէ քաղաքական պարտաւորութիւններից մինը, և իւրաքանչիւր մանուկ պարտաւոր է որչափ և իցէ ուսանիլ: Ընդ հակառակն Գաղղիայումը նայումն ուսման վերայ իբրեւ մին իրաւունքի վերայ, որը որ իւրաքանչիւր որ ազատօրէն կարող է գործ դնել կամ ոչ. այս տեղ ամենայն հասարակութիւն պարտաւոր է հիմնել նախակրթական ուսումնարաններ, ուր ազքատ երեխաները դալիս են և ուսանումն ձրիապէս. բայց քաղել օգուտ իւրեանց զաւակների համար ձրի դասատուութիւնից այդ ուսումնարանների մէջ կամ ոչ՝ այդ թողած է ծնողների ազատ կամքին: Գերմանիայումը, ընդ հակառակն, երեխաները պարտաւոր են գնալ ուսումնարան, և եթէ հարկը պահանջէ՝ նաեւ ստիպում են նոցա: Ուրեմն Գաղղիացոց ուսմանը երեխաները ընդդիմաբաժանուած է Գերմանացոց ուսմանը պարտաւորութեանը և այդ զանազանութիւնը մնումէ անփոփոխ մինչև ցայժմ:

Միւս պատճառը կախեալ է վարժարանների կարգադրութեան վերայ եղած հայեցումների զանազանութիւնից, որ յայտնի երևեցաւ Գաղղիացոց թագաւորութեան (le roy-

aume) և կայսերութեան մէջ (l'empire): Մտարերկը 1-ուղովիկ Փիլիպպոսի արած կարգադրութիւնները ազգային ուսումնաւորութեան և լուսաւորութեան համար, որ եղան զլուսւոր առիթ տարաձայնութեան հոգեւորականների և Փիլիպպոսի իշխանութեան մէջ, այնպիսի տարաձայնութեան, որ եղաւ կորստական իւր իսկ Փիլիպպոսի համար: Հոգեւորականները օգնելով իւրեանց կողմից երկրորդ կայսերութեանը, (le second empire), շատ զանազան օգուտների հետ միասին ստացան լիակատար իշխանութիւն ուսումնական մասնի վերայ, այն իշխանութիւնը, որը որ 1-ուղովիկ Փիլիպպոսը աշխատում էր կրճատել վորը առ փոքր: Բարձրագոյն ուսումն, նորա ժամանակումը յայտնի բարձուած էր հոգեւորների ձեռից, որովհետեւ հնարած էին առանձին վիպակներ ուսման ընթացքը աւարտողների համար, և առանց այդպիսի վիպականի չէր կարելի քննութիւն տալ առաջին ուսումնական աստիճանաւորի անունը ստանալու համար (bachelier), որ անշուշտ հարկաւոր է ամենայն ուսումնական հանդիսումը: Իսկ այդպիսի վիպականներ ստացուում էին միայն թագաւորական լիցէյներումը: Այն ժամանակից սկսած, երբ վիպականները փոխուեցան, բարձրագոյն հոգեւոր վարժարանները կրկին սկսան մաքառել լիցէյների հետ և խել նոցանից աշակերտներ իւրեանց դասատուութեան թիթեւ գնով: Այդ պատճառաւ, թէպէտ ուսումնաւորութիւնը վարժատուններին, համալսարաններին և Եկադեմիաներին մէջ, նա ևս Colège de France ասած ուսումնարանումը, բոլորովն ձրի է և ուսանելու իրաւունքը այդ տեղերում տուած է ամենին, բայց և այնպէս հետևանքը, որին որ հասել է Գաղղիան իւր ուսմանը՝ երբեք չի կարող ինչպէս արժանի է. գտնեա Գաղղիացիք չեն կարող երբեք հաւաստարուել այդ բանումը Գերմանացոց հետ, որ շինել են ուսումնաւորութիւնը իբրեւ մին պարտաւորութեան մասնումը ժողոված զնուորացու մարդկանց մէջ (рекруты) մինը չկայ, որ չունենայ նախակրթական գիտութիւնները, մնացած նահանգներումը անդրադէտը լինումէ հարկւրից երկուսը: Իսկ Գաղղիայումը 1859 թուականին հաւաքած զնուորացու մարդկանց մէջ հազարից 670 մարդ միայն գիտէր որպէս և իցէ կարգաւ: Յայտնի է, թէ նախակրթական ու-

սուսն Վաղղիայումը տարածելու պարտաւորութիւնը և պատասխանատուութիւնը հոգեւորականների վերայ է և ազգային լուսաւորութեան նախարարի: Ուսումնի նոր դրած ընդհանրական թուղթը, որի պարտականութիւնը հակաճառում է բոլորովին բաների խակական որակաւորութեանը, ունի նպատակ, որպէս երևում է, ազգի ընդհանուր մտադրութիւնը դարձուցանել պատասխանատուութեան վերայ, այն որը որ հոգեւորները առել են իւրեանց վերայ, ունին այլով լիակատար իշխանութիւնը նախակրթական ուսումնատուութեան մէջ և համանգամայն այն խղճալի վիճակի վերայ, որի մէջ գտանուում է այժմ ուսումնատուութեան եղանակը Վաղղիայումը: Ամենայն Վաղղիայի ունի քաղաքական իրաւունք, որովհետև նոյնից իւրաքանչիւր կարող է բարձրացուցանել իւր ձայնը կամ կարծիքը: Բայց այդ իրաւունքը չէ համաձայնում այն բանի հետ, որ Վաղղիայից ազգի երեք մասնից երկուսը միայն կարող են հաշտ կարգաւ որպէս և իցէ ընտրողական ձևադիրները (избирательный ярыкъ). Courrier du Dimanche օրագիրը քննում է այն խնդիրը, որ շատ անհաճ է մանաւանդ կայսերական ուսմկապետութեանը (Императ. демократія), և յաւելցնում է, թէ Վաղղիայից՝ ամենայն լուսաւոր ազգերից շատ աւելի ունին ուսմկապետական կարգադրութիւններ, բայց և ամենից առաւել յետ են ընկած ուսումնարանական կրթութիւնից: Սակայն նոյն Courrier du Dimanche օրագիրը ասում է, թէ ստիպմամբ ուսումնարան գնալը ընդդէմ է անձնական ազատութեան: Temps լրագիրը անսանում է նոյնպէս յայտնի հակաճառութիւն խօսքի և գործի մէջ ուսմկապետական կարգադրութիւններում, զորօրինակ ընտրողութեան ընդհանուր իրաւունքի մէջ: Այդ ընտրողութեան ընդհանուր իրաւունքից ասում է, կատարութիւնը շնորհիւ ընդհանուր պարտաւորութիւն ընտրելու այն մարդկանց, որոց ցանկանում է ունենալ ինքը կատարութիւնը: Մինչև ցայժմ չէ գտանուում մին հնարք, որով որ գոյնար մին ընդդիմադրութիւն կամ հակաճառական կուսակցութիւն, որի առաջին գործը կլինէր քննել ժողովուրդի ուսումնատուութեան խնդիրը: Opinion Nationale օրագիրը պաշտպանում է համալսարանը ընդդէմ հոգեւորներին: Բայց ակադեմիական ուսումնատուութիւնը շատ փոքր կախում ունի հոգեւորներից քան թէ նախակրթականը, վասն որոյ ժողովուրդական դպրոցներին, և ոչ թէ Ակադեմիաներին հարկաւոր է վերանորոգութիւն, թէպէտ և «կայսերական ուսմկապետութեան» օրագիրը հրաւիրում է բարեփոխել բոլոր ուսումնարանները առանց բացառութեան: Թէ այսպէս և թէ այնպէս, բայց միայն յայտնի երևում է, թէ ժողովրդական ընդհանուր կարծիքը սկսանում է որոնել Վաղղիայի ներկայ դրութեան պատճառը ոչ թէ դրսից կամ մակերևութի վերայ, այլ ներսից և աւելի խորին ձևով:

ՀԱՄԱԲԱՆՆԵՐ

1861. Հոկտեմբեր 3.

ՊԱՆՍՏԱԿԱՆ

ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԳԾԻՒՒ ՀԱՍՈՒՄ *

Սեպտեմբերի 17. ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՄՐՆ ՎԵՐԷ և թաման հասանելուց յետ, Սեպտեմբերի 11 ին, կէս օրին, բարեհաճեցաւ ճանապարհորդութիւն առնել Վուսպան նահանգի մէջ և երեկոթ արաւ թռչելու քաղաքում, իսկ ամսի 11 ին՝ Երազերիւնուար քաղաքում: Սեպտեմբերի 13 ին՝ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ մին գունդ զօրքով գնաց Տիւրքիսիւք և Սրիկուրիսիւք ամրոցները գննելու, և երեկոթ արաւ Ուստ-Ղապինսքի մէջ. իսկ ամսի 14 ին՝ Մայքովսք ամրոցում: Սեպտեմբերի 15 ին՝ ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ գնաց գննելու Պէյլոյ անուանակալ գետի միւս կողմում եղած տեղերը. երեկոյն հասաւ Ղապին-Ապաշտէխան գնդի բանակը, որ Խամբէթ բերդի մօտ է, ուր և ամսի 16 ին՝ անցուց օրը. իսկ 17 ին՝ առաւօտուն, բանակին մէջ պատարագին ներկայ գտանուելուց յետոյ՝ սկսաւ շարունակել իւր ճանապարհորդութիւնը Ղապինսան գծի վերայով:

— Սեպտեմբերի 20. ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՄՐՆ Խամբէթի բանակից ելանելուց յետ, Սեպտեմբերի 17 ին, երեկոթ արաւ Անուրուքեան իջեանում: 18 ին՝ Ղապինսան իջեանում: 19 ին՝ Ուստ-Ղապինսան իջեանում, իսկ այսօր՝ պիտի առնէ Վափլեան փողոցում: Ղաղը, այն է՝ Սեպտեմբերի 21 ին, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ անցանելով Ատակում և Վրըմքիլ ամրոցները՝ պիտի գնաց Վանատանդինովսքիլ ամրոցը, և այս տեղից ծովով՝ Սուխում-Վալէ, իսկ յետոյ կէս մի ջրով՝ Ուիւնի վերայ, և կէս մի չորութեամբ՝ Վուլթայիս:

— Սեպտեմբերի 23. ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՄՐՆ Սեպտեմբերի 21 ին՝ հասանելով Վանատանդինովսքիլ ամրոցը՝ յետ ճաշու ուղեւորեցաւ «Թիկը» անուն շոգնաւով Սուխում-Վալէ. բերդերը և զօրքերը գննելուց յետ, ամսի 22 ին՝ ժամը 3 ին յետ կէս աւուր, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ շարունակեց նաւով իւր ճանապարհորդութիւնը մինչև Փօթի, ուր և յաջողութեամբ հասանելով՝ իջաւ այսօր ժամը 2 ին առաւօտու, Վուլթայիս գնալու համար:

— Սեպտեմբերի 28. ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՄՐՆ հասաւ Վուլթայիս Սեպտեմբերի 23 ին երեկոյան, և 24 ին ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ընդունեց բոլոր պաշտօնաւորներին, և Ղապատանի և Խմէրէթի, Մինկէլիայի և Սուրիայի մեծ բազմութեամբ հաւաքուած պատուաւոր անձինքը և իշխանները, նոյնպէս և Սովկասեան Մահմետական գաւառների պատգամաւորները: յետոյ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՄՐՆ ներկայ գտանուեցաւ շարժական տաճարի մէջ կատարուած պատարագին, որ արաւ Ղապատանու Էկզարխը, գննեց Ամինաղիան, աղջկանց ուսումնարանը Սրբոյն Նունէի անուամբ, և զինուորաց հիւանդանոցը:

* Լրագրի նախընթաց համարների մէջ հաղորդած լուրերը կայսերական գերդատանի ճանապարհորդութեան մասին, բոլորն ստացուած են երեքօրեայ կանգիւ:

Այդ քաղաքը է Գորենցիայի ուր եղաւ մին մեծ տեսարան. Իտալիոյ ամենայն կողմից հաւաքուեցան այս տեսարանիս մէջ 8,000 ից աւելի ձեռագործք: Այս տեղ կային մետաքսեղէն և բրդեղէն կերպաններ (ձորմեր). այլ և այլ քաթանեղէնք. յախճապակեայ՝ երկաթեայ և փայտեայ ձեռակերտուածներ, մեքենաներ թէև ոչ շատ. զանազան զէնքեր և երկրագործութեան գործիքներ. ծաղիկներ և պտուղներ, և վերջապէս մին նշանաւոր երկրորդական մեքենայ, որով հաղորդուած է իւրաքանչիւր բառը իւր ամենափոքր հանգամանքներովը, այն է՝ շէշտերով և այլ նշաններով: Այդ մեքենայն շինած է Պ. Բողէլի: Միով բանիւ, այս տեսարանս յայտնի արաւ թէ Փիլիմոնթը կարողացաւ առաւել ճոխացնել իւր ձեռակերտուածքը և արուեստը, քան միւս Իտալիոյ գաւառները: Զարմանալի չէ այս, որովհետև Փիլիմոնթը 12 տարի գտանուած էր աղատութեան մէջ, իսկ միւս կողմերը գտանուած էին Աւստրիայի իշխանութեան տակ:

— Փարիզի մէջ բացուեցաւ մին ձեռքը (бывшая), որի բացման հանդիսի համար Պ. Շէրպանը գրում է իւր տառնակէ կերպով նամակի մէջ. «Մարդկային ձեռքը բացուեցաւ Օգոստոսի 14 ին մեծ շքեղութեամբ՝ կասեալ թէ յանկարծակի, ազգային զօրքի ներկայութեամբ, ճառասացութեամբ և թմբակահարութեամբ... Ընթերցողը իհարկէ թոյլ կտայ մեղ հրաժարուիլ ճրագաւառութեան հանդիսի երկնցողի պաշտօնից և չափաւորել մեր նկարագրութիւնը ճրագաւառութեան վերայ միայն այսու, թէ եղանակը յաջողակ էր, և թէ նոր վերջացած պատերազմի պատուի համար, փայլում էր զանազան կերպի շինուած շինական լապտերներով: Բայց Մարդկային ձեռքի վերայ անկարելի է լռել: Մին նոր փողոցի, կամ մին նոր ձեռքի, և կամ առհասարակ նոր ճանապարհի բացումն — արդէն Փարիզի մէջ նոր բան չէ: Կայսրն ինքն, Օգոստոսի 14 ին, սկսաւ իւր ճառը, խոստովանելով թէ նոր ճանապարհի բացումն քաղաքի մէջ շատ երեւելի բան չէ այժմ: Բայց սորան շնայելով, ձեռքի բացուելու հանդիսից շինեցին մին այնպիսի նշանաւոր անցք, որ հանդիսանումէ փառաւոր շէփորներով (трудоами), բամբուկներով (бамбуками), գունաղոյն դրոշակներով, հետադարձան շարժողութիւններով և երեք հարիւր հազար ժողովուրդով: Բանը այն է, որ անվերջ քանդմունքները և կրկին շինութիւնները զգուցեց Փարիզի ժողովուրդին: Ամենայն կողմից լսում էք զանգառներ կառավարութեան վերայ: Անցեալ տարի անբաւականութիւնը երևում էր միայն հասարակ խօսակցութեան մէջ, և մին պ. Վէյլ համարում էր հերոս, որ յանձն էր առնում ողբալ Փարիզեան աւերակների վերայ... Բայց 1861 ի գարունից սկսան նոյն ողբը յորինել և այլ ազատ լրագիրներ այն ջանքի դէմ՝ որ կամենում էր յանկարծ, մին անգամով վերանորոգել քաղաքը, որ հիմնուած է դարաւոր ժամանակներով: Երաժշտական ձայները պիտի խափանէին անկանող որմերի բոմբիւնը, Պ. Կառամանի՝ Սէն Տէփարտամենտի փրէֆերթի ճառը — պիտի ամաչեցուցանէր «չարակամ բամբասողներին» և պիտի ապացուցանէր, թէ քանդումը զոյու թեան նպատակն է՝ առհասարակ, և Փարիզի բարօրութեան պսակն է՝ մասնաւորապէս: Զարմանալի՝ հայեցուած բարօրութեան վերայ»:

— Կոստանդնուպոլսում սպասում են Ռուսիոյ ՕԳՈՍՏՄԵՆԻ ԿԱՅՍԵՐԻՈՒՆՈՅՆ, որ պիտի անցանէ Սուրբ Երուսաղէմ գնալու ժամանակը, և մեծամեծ պատրաստութիւնք են անում նորին Մեծութիւնը ընդունելու համար:

— Չինաստանից Օգոստոսի 12 ից առ մեղ հասած լուրերը ծանուցանում են թէ նոյն օրը վախճանած է Փէքինի մէջ Պաղարխանը (Չինաց թագաւորը), որի վերջին երկու կարգադրութիւնը տպուած են նոյն քաղաքի լրագրում, որոց առաջինով՝ վախճանեալը իւրեան յաջորդ է նշանակում իւր մեծ որդին, և երկրորդով, խորհրդարան է հաստատում ու թանգամներից կազմուած:

— Քհոնիկայերի քաղաքում պատրաստութիւն են անում Բրուսիոյ թագաւորի թագադրութեան հանդիսին, որ պիտի կատարուի այս օրերումս:

— Դնտոնի մէջ նորումն բացուեցաւ մին նոր երկաթուղի երկրի տակից, որի երկայնութիւնը է կէս միլ: Այս երկաթուղին այնով է զարմանալի, որ նորա կառքերը գնում գալիս են ոչ թէ շոգիի ջօրութեամբ, այլ օդի:

— Վաղղիոյ Լիօն քաղաքի համալսարանի մէջ Տօպկէ անուն օրիորդը քննութիւն բռնեց և ստացաւ գլխաւոր անուանեալ Աստիճանի վկայականը: Այս առաջին անգամն է, որ այս ուսումնական աստիճանս՝ այժման Վաղղիոյ մէջ, տուին կին մարդոյ:

— Հելլոպոլիսեան համալսարանի մէջ փիլիսոփայութեան վարժապետ նշանակուեցաւ մին Հրեայ՝ Վէյլ անուն: Այս առաջին օրինակն է այսպիսի անխորութեան կրօնի Գերմանիայի մէջ:

— Առաջակայ տարում Վիեննայ քաղաքը պիտի տօնախմբէ իւր առաջին տպարանի հաստատութեան 400 ամեայ շրջանը: Առաջին տպարանապետն եղաւ Ռ. Լըիս Հան, որ հաստատեց իւր տպարանը ի 1462 թուականին:

— Վաղղիացեաց թագուհին գրում է վկայականութիւն (свидетельство), որ պիտի տպագրուի «Journal des Débats» անուանեալ լրագրի բանասիրական մասնում:

— Օրեկոնի գաղթականները ծանուցին թէ գտած են մի արծաթեայ լեւոն, որի վրին՝ եղած հաշուոյն նայելով, հասնում է, ասում են, մինչև 1,666,600,000,000 տօլլար:

— Մեքիկայի կեղրոնում գտանում են այժմ մարախ 4 տիւյժ երկայնութեամբ:

ԵՐՈՒՆԱՏԵԿԱՆ

Վաղղիացի Փրէմիէ անուն բժիշկը գտաւ մին նոր հնաք խմանալու կարծիքական մահճ: Նա առնում է մին երկայն ու սուր ասեղ, և խոթում է նորան մեռելի կուրծքին դէպ ի սիրտը: Եւ եթէ ստուգու մեռած է, ասեղը մնում է անշարժ, իսկ եթէ չէ մեռած, սկսում է շարժել:

ԵՈՒՆԻՏԵԿԱՆ

ԵՅԼ ԵՒ ԵՅԼ ԵՊԸՆՅՆԵՐԻ ԳԻՆԵՐԸ

Աղբյուր		Ռ.		Կ.	
Համախու	100	—	—	—	—
Ղարապաղու	100	—	105	—	—
Ղուպու	100	—	—	—	—
Օւրբիու	100	—	105	—	—
Իմերէթու	—	—	—	—	—
Կախէթու	—	—	—	—	—
Նուխու	100	—	100	—	120
Նուխու բարձրաստիճան	130	—	150	—	175
Նուխու ընկերութեան	—	—	—	—	—
ՀՏԻ					
Պարսկաստանը (Կարասու)	1	50	—	—	—
Համախու	2	50	—	—	—
Ղլարու	2	30	—	—	—
Մարէնայ					
Արտաքէլու (փուլը)	—	—	—	—	—
Աստրապատու	—	—	—	—	—
Խիվայու	—	—	—	—	—
ՀՏԻ					
Պարսկաստանու (Քուշդը)	4	—	4	50	—

ԽՄԲԱԳՐԻԶՔ Մ. և Զ. ՄՍԵՐԵԱՆՅ